

Երեւանի մամուլի ակումբի՝ 2003թ. ֆինանսական գործունեության

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ՝

Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում՝ 2003թ. հունվարի 1-ից մինչև 2003թ. դեկտեմբերի 31-ը, ստացված միջոցների ընդհանուր գումարը, ներառյալ նաև 2002թ. հունվարի 1-ի մնացորդը՝ 9140000 դրամ, կազմել է 135612000 դրամ:

ԵՄԱ անդամների անդամավճարները կազմել են՝ 76000 դրամ, դրամաշնորհներ Բաց հասարակության ինստիտուտի ԶԼՄ-ների ցանցային ծրագրի՝ 59091000 դրամ, դրամաշնորհ Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայաստանյան գրասենյակի՝ 57891000 դրամ, դրամաշնորհ Համաշխարհային Բանկի՝ 4672000 դրամ, մուտք՝ «Արտիկ XIX» կազմակերպության ստացած դրամաշնորհից՝ 3075000: Փոխարժեքային դրական տարբերությունը կազմել է 694000 դրամ եւ 225000 դրամ ստացվել է բանկային տոկոսներից; Մեկ անդամից մուտք է եղել 748000 դրամ:

Հաշվետու ժամանակահատվածում ծախսվել **104159000** դրամ, որից.

1. Աշխատավարձի եւ հոնորարների վճարման համար ծախսվել է 52254000 դրամ:
2. Աշխատավարձից եկամտահարկ եւ կենսաթոշակային հիմնադրամ մուծումները կազմել են 17075000 դրամ:
3. Հիմնական միջոցների ձեռք բերման համար ծախսվել է 4852000 դրամ:
4. Բանկային ծառայությունների համար մուծվել է 516000 դրամ:
5. Կապի եւ փոստային ծախսերը կազմել են 4630000 դրամ:
6. Գրասենյակային, գրենական պիտույքների եւ փոքրարժեք առարկաների ձեռք բերման ծախսերը կազմել են 3411000 դրամ:
7. Տրանսպորտային ծառայությունների եւ վառելիքի ձեռք բերման ծախսերը կազմել են 1294000 դրամ:
8. Մեմինարների, հեռուստակոնֆերանսների կազմակերպման ծախսերը կազմել են 3528000 դրամ:
9. Գործուղման ծախսերը Կներառյալ հարկերը՝ կազմել են 3473000 դրամ:
10. Տարածքի վարձավճարը կազմել է 632000 դրամ:
11. Պարբերական հրատարակությունների ձեռք բերման համար ծախսերը կազմել են 402000 դրամ:
12. Կոմունալ ծախսերը կազմել են 529000 դրամ:
13. Զփաստաթղթավորված (ակտով) ծախսերի դիմաց 10% եկամտահարկը կազմել է 60000 դրամ:
14. Ապրանքների ձեռք բերման համար կազմակերպություններին վճարված ԱԱՀ կազմել է 1175000 դրամ:
15. Գույքահարկի վճարումը կազմել է 27000 դրամ:
16. Գրքերի եւ բրոշյուրների հրատարակության ծախսերը կազմել են 5828000 դրամ:
17. Գրասենյակի պահպանման, սպասարկման եւ վերանորոգման ծախսերը կազմել են 1534000 դրամ:
18. Մարքավորումների եւ գրասենյակային տեխնիկայի սպասարկման եւ նորոգման ծախսերը կազմել են 313000 դրամ:
19. Փոխարժեքի բացասական տարբերությունը կազմել է 1911000 դրամ:

20. Անդամին է վերադարձվել իր մուտքագրած գումարի դիմաց՝ 715000 դրամ:

Շնորհատու կազմակերպությունների պահանջին համապատասխան ժամանակին նրանց է ներկայացվել առանձին ծրագրերի եւ ծախսվող գումարների ամբողջ հաշվետվությունը:

ԵՄԱ կանոնադրության համաձայն բոլոր ծախսերը համաձայնեցվել են ԵՄԱ վարչության հետ:

Բոլոր եկամուտները եւ ծախսերը հիմնավորված են փաստաթղթերով, որոնք պահվում են մամուլի ակումբի հաշվապահությունում:

2004թ. հունվարի 1-ի դրությամբ մնացորդը կազմել է 31453000 դրամ:

Սույն հաշվետվությունն ընդգրկում է միայն այն գործունեությունը, որտեղ ֆինանսները Երեւանի մամուլի ակումբն է տնօրինել: